Արձանագրություն 4

Տաշիր համայնքում 2025թ.-ին ստեղծված մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի Հանրային քննարկումների և լսումների փուլի արդյունքների նիստի

Ք. Տաշիր
10/07/2025թ., 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝
Նաթելլա Մուրադյանը - Համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ,
Հանձնաժողովի անդամներ՝
Ասյա Հարությունյան - Համայնքապետարանի աշխատակազմի Սոցիալական աջակցության, առողջապահության, սպորտի, մշակույթի, երիտասարդության և կրթության բաժնի պետ,
Սևադա Սարգսյան - Համայնքի ղեկավարի խորհրդական,
Գոհար Մանուկյան - Ավագանու անդամ
Համայնքի ակտիվ բնակիչ՝
Ինեսսա Խանաղյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Աստղիկ Բարոյան - Համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, առևտրի, սպասարկման, գովազդի և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ

Օրակարգ

Տաշիր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում հանրային քննարկումների և լսումների փուլի արդյունքների ավարտի ամփոփում:

Լսեցին՝
1.Հանձնաժողովի նախագահի տեղակալ Նաթելլա Մուրադյանին՝

-ողջունեց հանձնաժողովի անդամներին, ներկայացրեց ստացված առաջարկների քվեարկության հետ կապված տեղեկատվությունը: Նշվեցին ակտիվ բնակավայրերը, որոնք բավականաչափ ձայներ են ապահովել:

-Արձանագրեց, որ ներկայացված «Խաղահրապարակների կահավորում» առաջարկը, որով առաջարկվում էր կահավորել համայնքային խաղահրապարակները, հավաքել է 54 ձայն, իսկ Գերեզմանատան ճանապարհների բարեկարգումը, որը ընդգրկում էր Արծնի, Սարատովկա, Մեծավան և Տաշիր բնակավայրերը, հավաքել է 314 ձայն:

-Նշեց, որ համայնքում քվեարկության իրավունք ունեցողների թիվը, ըստ ռեգիստրի տվյալների, կազմում է 23940, որի 1%-ը կլինի 240 մարդ, սակայն ընդհանուր քվեարկողները եղել են 368 անձ:

-Կարևոր է նաև արձանագրել առաջացած խնդիրները՝ հաջորդ տարիներին դրանցից խուսափելու համար: Օրինակ, տարեց մարդիկ մեծ ցանկություն ունեն մասնակցելու, սակայն առանց երիտասարդների օգնության չեն կարողանում գրանցվել, և SMS-ի ստացման խնդիրը, որը, թերևս, տարածքը սպասարկող օպերատորներից մեկ մետ էր միայն:

-Կարևոր է նշել, որ հիմնական ձայները ապահովել են փեքր՝ Սարատովկա և Արծնի բնակավայրերը:

-Արձանագրեց հանրային քննարկումների և լսումների փուլի ավարտը:

Լսելով հանձնաժողովի նախագահի տեղակալի ներկայացրած տեղեկատվությունը, քննարկելով հետագա անելիքները, Տաշիր համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Մասնակցային բյուջետավորման գործընթացի հանրային քննարկումների և լսումների փուլի համարել ավարտված՝ դրական արդյունքներով,

2. Սկսել իրականացման փուլը՝ ժամկետը նշանակելով սույն թվականի հուլիսի 7-ից մինչև նոյեմբերի 28-ը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ն. Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բարոյան